Սոցիալական ինտեգրման հայաստանյան ՔՀԿ Ֆորում
Վարքագծի կանոնագիրք

Վարքագծի կանոնագիրքը ընդհանուր նորմերի և սկզբունքների ամբողջություն է, որը նպատակ ունի ուղղորդել Ֆորումի անդամների վարքագիծը: Ստորագրելով Վարքագծի կանոնագիրքը՝ մենք պարտավորվում ենք պահպանել և պաշտպանում ենք մեր աշխատանքի հիմքում դրված հիմնարար սկզբունքները.

Մարդասիրական սկզբունքներ. Մի վնասիր. Մենք հետևում ենք մարդասիրական հիմնական սկզբունքներին՝ մարդասիրությանը, անաչառությանը, չեզոքությանը և անկախությանը: Մենք հավատարիմ ենք էթիկական գործողություններին, որոնք ծառայում են մարդկանց և համայնքներին՝ առանց վնաս պատճառելու:

Ոչ քաղաքական. Մենք քաղաքական պայքարով չենք զբաղվում. Մեր ուշադրության կենտրոնում է Հայաստանում մարդկանց տնտեսական և սոցիալական բարեկեցությունը: Մենք աշխատում ենք համախոհ կազմակերպությունների հետ, որոնք կիսում են այս նպատակը:

Պետական համագործակցություն. Մենք կարծում ենք, որ մեր հավաքական ձայնը պետք է լսելի լինի պետական իշխանությունների կողմից: Մենք նպատակ ունենք սերտորեն աշխատել պետական կառույցների հետ և պաշտոնական հարաբերություններ ձևավորել նրանց հետ:

Ընդունող միջավայր. մենք աջակցում ենք այնպիսի միջավայրի ստեղծմանը, որտեղ բոլոր անդամները կարող են արդյունավետ գործել՝ անկախ կազմակերպության չափից և գտնվելու վայրից: Մենք օգնում ենք զարգացնել անդամ կազմակերպությունների կարողությունները և վստահությունը՝ ուժեղացնելով նրանց թիմերին:

Համախմբված գործողություն. Մենք հավատում ենք միասին աշխատելու ուժին: Մեր նպատակն է պաշտպանել մեր ընդհանուր նպատակները ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակներում:

Թափանցիկություն և հաշվետվողականություն. մենք հավատարիմ ենք մեր գործողությունների թափանցիկությանը: Մեր քաղաքականությունն ու կառուցվածքը երաշխավորում են հաշվետվողականությունը անդամներին, գործընկերներին և շահագրգիռ կողմերին:

Խտրականության բացառում. Մենք խտրական չենք որևէ անհատի կամ խմբի նկատմամբ՝ պայմանավորված սեռով, քաղաքական պատկանելությամբ, էթնիկ ծագմամբ, կրոնական համոզմունքներով կամ սեռական կողմնորոշմամբ:

Կազմակերպության անուն

Ամսաթիվ

Վայր

Ստորագրություն

Սոցիալական ինտեգրման հայաստանյան ՔՀԿ Ֆորում

Անդամակցության չափորոշիչներ

Ֆորումը կազմված է լինելու այն անդամներից, ովքեր պատրաստ են պահպանել Վարքագծի կանոնագիրքը, Համագործակցության Հուշագիրը և հետևել Նախաձեռնող խմբի կողմից սահմանված ցանկացած լրացուցիչ անդամակցության չափորոշիչներին:

Ֆորումին անդամակցելու պարտադիր չափորոշիչներն են՝

1. Անդամները պետք է լինեն ոչ կառավարական, ոչ առևտրային, ոչ կուսակցական և ոչ քաղաքական կազմակերպություններ, որոնք գործում են Հայաստանում մարդասիրական, սոցիալական ինտեգրման, սոցիալական ծառայությունների և տնտեսական ակտիվացման ոլորտներում:
2. Անդամները պետք է գրանցված լինեն Հայաստանի Հանրապետությունում, որպես ՀԿ:
3. Անդամները պետք է ունենան առնվազն մեկ ղեկավար պաշտոնի ներկայացուցիչ, ով մշտապես գտնվում է Հայաստանում:
4. Հավանական անդամները պետք է ապացուցեն առնվազն երկու տարվա փորձ՝՝ Հայաստանի մարդասիրական, սոցիալական պաշտպանության կամ զարգացման ոլորտներից որևէ մեկում:
5. Անդամները պետք է ստորագրեն և պահպանեն Վարքագծի կանոնագիրքը:
6. Անդամները պարտավոր են ապահովել ներկայացուցիչների մասնակցությունը Ֆորումի առնվազն 80 տոկոս հանդիպումներին և պատասխանել առնվազն 80 տոկոս հարցումներին:

Անդամները պետք է լրացնեն դիմումի ձևաթուղթը, որը կարող են ստանալ Քարտուղարությունից: Քարտուղարությունը կուսումնասիրի դիմումի ձևը և, եթե այն ամբողջական է, կուղարկի Նախաձեռնող խմբին՝ հաստատման համար: Քարտուղարությունը կտեղեկացնի հնարավոր անդամին Նախաձեռնող խմբի որոշման մասին:

Սոցիալական ինտեգրման հայաստանյան ՔՀԿ ֆորում
Անդամակցության դիմում

Բոլոր դաշտերը լրացնելը պարտադիր է: Անհրաժեշտ տեղեկատվությունը չտրամադրելը կարող է ազդել անդամակցության հաստատման վերաբերյալ որոշման վրա:

Անդամակցության թեկնածուները պետք է լրիվ և ստորագրված դիմումը ներկայացնեն հետևյալ էլ. հասցեներին. armenianngoforum@outlook.com: Ձեզ կուղարկվի դիմումի ստացման հաստատում:

Քարտուղարությունը կքննի դիմումը, և եթե այն լիարժեք է, կփոխանցվի Նախաձեռնող խմբին՝ հավանության համար: Քարտուղարությունը կտեղեկացնի անդամության թեկնածուին Նախաձեռնող խմբի որոշման մասին:

1. Տեղեկություն կազմակերպության մասին	
Կազմակերպության անուն	
Կազմակերպության ղեկավար	
Կազմակերպության գլխավոր հասցեն	
Այլ հասցեներ Հայաստանում	
Պաշտոնական էլ-հասցեն և հեռախոսահամարը	
Կայք և սոցիալական ցանցեր	
2. Տեղեկություն պատվիրակված անձանց վերաբերյալ	
Պատվիրակված անձի անուն, ազգանուն	
Կազմակերպությունում զբաղեցրած պաշտոն	
Էլեկտրոնային հասցե	
Հեռախոսահամար	
Փոխարինող անձի անուն, ազգանուն	
Կազմակերպությունում զբաղեցրած պաշտոն	
Էլեկտրոնային հասցե	

Հեռախոսահամար	

3.Կարճ մոտիվացիա Ֆորումին միանալու համար (200 բառ)

4. Երբվանի՞ց է Ձեր կազմակերպությունը գործում Հայաստանում

5. Կազմակերպության տարեկան շրջանառություն

Տարեկան մինչև 100,000 եվրո ☐

Տարեկան 100,000-ից մինչև 1 միլիոն եվրո ☐

Տարեկան ավելի քան 1 միլիոն եվրո ☐

6.Կազմակերպության աշխարհագրական ներկայությունը Հայաստանում

7.Գործունեության ոլորտներ և աշխատանքի շրջանակի կարճ նկարագրություն (կարելի է նշել մեկից ավելի ոլորտ)

Մարդասիրական ☐

Սոցիալական ☐

Տնտեսական ☐

Այլ, խնդրում ենք մանրամասնել

_____

8. Ֆինանսավորման աղբյուրներ

9.Միջազգային և ներքին անձնակազմի թիվը (լրիվ և կես դրույք)
Միջազգային ☐ Տեղական ☐
10. Նշեք Ձեր գործընկերներին Հայաստանում (վերջին 3 տարիների ընթացքում)
11. Վարքագծի կանոնագիրքը ստորագրված և կցված է այս դիմումին
Այո ☐ Ոչ ☐
12. ՀԿ կանոնադրությունը կցված է այս դիմումին
Այո ☐ Ոչ ☐

Կազմակերպության պատասխանատու պաշտոնյայի ստորագրությունը՝

Ամսաթիվ _____

Վայրը _____

Ստորագրություն _____